թյունը, որով վերջին ապացուցվում է հայերի համաձնությունը և մարդաբանական նմանությունը: Հայերի էթնոգենեզում գլխավորը, ուրեմն, տեղական ծագումն է, տեղական մարդաբանական տիպաստրատի կազմավորումն ու զարգացումը:

Ռաֆիկ Վարդանյան

ՃՄՆԱՊԱՐՀԱՉԱՓԵՐՆ ԱՆԴՐԵՌՎԱՆԱՍՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ

1. Անդրկովկասի տարբեր շրջաններում օգտագործվել են ճանապարհաչափերի լոկալ համակարգեր, որոնք կապված են եղել ավանդական պատկերացումների հետ, ունեցել են հին ակունքներ և էական փոփոխություն չեն կրել XIX դ.:

2. Ճանապարհի չափման հիմնական միավորը, ըստ սովորության, ընդունվել է մեկ ժամվա ճանապարհը, որն ունեցել է զանազան անվանումներ, այն է՝ աղաշ, սահաթ, Ֆարսանգ և այլն:

3. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ ժամվա ճանապարհի չափանիշը և դրա համակարգի մեջ մտնող միավորները եղել են հարաբերական մեծություններ, նախատեսված մարդու, մաքսային գրաստի /ձի, ջորի, ուղտ ևն/, քարավանի և այլնի համար:

ա/ Մարդու մեկ ժամվա ճանապարհը տատանվել է միջին հաշվով մոտ 5կմ սահմաններում:

բ/ Մաքսային ձիու մեկ ժամվա ճանապարհը ևս եղել է հարաբերական մեծություն, թեև այն կարելի է դասակարգել հիմնականում երկու խմբի, կապված ոչ միայն Անդրկովկասում ավանդաբար օգտագործված ձիու երկու տեսակի ու դրանց որակի, այլև տեղանքի և եղանակի հետ: Ըստ այդմ, մաքսային կարճահասակ ձիու մեկ ժամվա ճանապարհը տատանվել է 5,5-6,4 կմ սահմաններում, երկարահասակ ձիունը եղել է միջին հաշվով 7,5 կմ:

4. Մեկ օրվա ճանապարհի մեծությունը տատանվել է վերոհիշյալ գործոններին, տարվա ցիկլային փոփոխությանը, գյուղերի միջև եղած հեռավորությանը համապատասխան և եղել է միջին հաշվով ութ ժամվա ճանապարհը:

XIX դ. Անդրկովկասում օգտագործված ճանապարհաչափերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն կապ տեսնել ավելի վաղ շրջանում կիրառված ճանապարհաչափերի հետ, այլև բացատրել դրանց հետ առնչված մի շարք երևույթներ, որոնք այլևայլ

կաճառներով մնացել են անհասկանալի:

Քնարիկ Խանաղյան

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

1. Համազգասխան մասնագետների կողմից բավական հանգամանորեն քննված են հայ ժողովրդական տան համալիրի կառուցվածքային և մարտարվեստական բնութագրման հարցերը: Սակայն են հետազոտված այդ համալիրի հետ առնչվող հավաքալիքներն ու սովորույթները: Դրանց ուսումնասիրությունն ունի գիտա-մանաչողական և արդիական-գործնական նշանակություն:

2. Տվյալ հաղորդման մեջ քննվելու են տան հիմնադրման-կառուցման / տեղի ընտրության, սահմանազատման, մաքրազործման և այլն/ հետ առնչվող, վերարդուկային կարգով տակավին հարատևող որոշ սովորույթներ:

3. Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն ֆունկցիոնալ կապը, որը դիտվում է տան համալիրի առանձին մասերի պաշտամունքի միջև՝ տեղի ընտրությունից մինչև տան բնակեցումը:

4. Սոցիալական, կենցաղային, բարոյախոսական որոշակի արժեք ունի տան համալիրի կառուցմանն ուղեկցող բանավոր մագիան՝ պաշտպանական և պահպանողական նպատակամղմամբ:

5. Ժողովրդական տան համալիրի կառուցման հետ առնչվող հավաքալիքներն ու սովորույթները գոյություն ունեն բոլոր ժողովուրդների մեջ: Զուգահեռների անցկացումը կարող է հարուստ նյութ տալ ժողովուրդների էթնո-մշակութային փոխազդեցությունների լուսաբանման համար:

6. Տան համալիրի հետ կապված մի քանի սովորույթներ կարող են արդիական հնչողություն ստանալ:

ա/ Նշանակալից կառույցների հիմքում կամ որևէ այլ հարմար մասում նշել մարտարվեստի և կառուցողների անունները:

բ/ Փոխօգնությունը տան կառուցման ժամանակ:

գ/ Սերնդական կապն ամրապնդելու միջոցները/ հին և նոր տան միջև եղած կապը, ծերունիների դերը/: